ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 15.05.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2020/109

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի

Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Պատվիրատու՝ Երևանի քաղաքապետարան

Մասնակից՝ «Ատլանտ Պրոֆիլ» ՍՊԸ

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝

«ԵՔ-ԲՄԱՇՁԲ-20/18» ծածկագրով բաց մրցույթ, Երևան քաղաքի թվով 2 մշակութային կազմակերպություններում վերանորոգման աշխատանքների ձեռքբերում:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 16.04.2020թ.-ի թիվ 26/26-1/5677-2020 գրությամբ «Ատլանտ Պրոֆիլ» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. **<u>Գործի նախապատմությունը</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Երևանի քաղաքապետարանի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 09.04.2020թ.-ի թիվ 01/61-6394 գրության հիման վրա, 16.04.2020թ.-ին «Ատլանտ Պրոֆիլ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձի գործը մակագրվել է 16.04.2020թ.-ին:

20.04.2020թ.-ին կայացված որոշմամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ, տրվել թիվ ՍՑ-ԼՕ-2020/109 համարի ծածկագիրը և նույն օրը հրապարակվել է www.gnumner.am կայքում:

Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 15.05.2020թ.-ին:

2. <u>Երևանի քաղաքապետարան-ի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.</u>

Երևանի քաղաքապետարանը 09.04.2020թ.-ի թիվ 01/61-6394 գրությամբ դիմելով ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնել է հետևյալը.

«Գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով Երևանի քաղաքապետարանի կողմից 17.12.2019 թվականին հայտարարվել է «ԵՔ-ԲՄՇՁԲ-20/18» ծածկագրով՝ Երևան քաղաքի թվով 2 մշակութային կազմակերպություններում վերանորոգման աշխատանքների գնման ընթացակարգ, որը բաղկացած է երկու չափաբաժիններից:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի որոշմամբ 1-ին չափաբաժնի մասով ընտրված մասնակից էր ճանաչվել «Ատլանտ Պրոֆիլ» ՍՊԸ-ն:

Օրենքով սահմանված կարգով անգործության ժամկետի ավարտից հետո, 20.03.2020 թվականին, Մասնակցին ներկայացվել է պայմանագիր կնքելու առաջարկ: Մասնակցի կողմից սահմանված ժամկետում չի ներկայացվել «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-20/18-1» ծածկագրով՝ Երևան քաղաքի «Պատանի հանդիսատեսի թատրոն» ՊՈԱԿ-ի լուսամուտների փոխարինման աշխատանքների ձեռքբերման պայմանագիրը, որակավորման և պայմանագրի ապահովումները: Համաձայն «Գնումների մասին» օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի՝ Մասնակիցը զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից:

Վերոգրյալ իրավական հիմքերով պայմանավորված՝ ղեկավարվելով «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի բ ենթակետով, առաջարկում եմ Մասնակցի նկատմամբ կիրառել Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով սահմանված դրույթը:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացվել է «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-20/18» ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգի շրջանակներում «Ատլանտ Պրոֆիլ» ՍՊԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով:

3. <u>«Ատլանտ Պրոֆիլ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 20.04.2020թ.-ին գրությամբ դիմել է «Ատլանտ Պրոֆիլ» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 16.04.2020թ.-ի թիվ 26/26-1/5677-2020 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, 21.04.2020թ.-ին ներկայացված դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

«Հաշվի առնելով ՀՀ-ում մարտի 11-ից հայտարարված արտակարգ դրությունը, այնուհետև մարտի 24-ից խիստ տնտեսական սահմանափակումները, մեր ընկերությունը՝ «Ատլանտ Պրոֆիլ» ՍՊԸ-ն ստիպված եղավ դադարեցնել իր գործունեությունը ենթարկվելով պարետատան հրահանգներին:

Այս ամենի արդյունքում ստիպված եղանք չեղարկել այդ ժամանակահատվածի համար նախատեսված բոլոր պայմանավորվածությունները:

Այդ հանգամանքով պայմանավորված՝ մենք հնարավորություն չէինք ունենալու պայմանագրում նշված ժամկետներում կատարել այդ ծավալի աշխատանք: Ոստի ստիպված էինք հրաժարվել առաջարկից:»:

4. <u>ՍՑ-LO-2020/109 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

Երևանի քաղաքապետարանի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից Երևան քաղաքի թվով 2 մշակութային կազմակերպություններում վերանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով 17.12.2019թ.-ին հայտարարվել է «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-20/18» ծածկագրով բաց մրցույթ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Ատլանտ Պրոֆիլ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 09.03.2020թ.-ի նիստի թիվ 5 արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը որոշել է «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-20/18» գնման ընթացակարգի՝ Երևան քաղաքի «Պատանի հանդիսատեսի թատրոն» ՊՈԱԿ-ի լուսամուտների փոխարինման աշխատանքների պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել «Ատլանտ Պրոֆիլ» ՍՊԸ-ին:

09.03.2020թ.-ին պայմանագիր կնքելու նպատակով գնումների պաշտոնական տեղեկագրում՝ www.gnumner.am կայքում Հանձնաժողովի կողմից հրապարակվել է պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարություն և սահմանվել է անգործության ժամկետ՝ հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ:

Պատվիրատուն 20.03.2020թ.-ին Մասնակցին ներկայացնելով «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-20/18» ծածկագրով պայմանագրի նախագիծը՝ հայտնել է, որ «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-20/18» ծածկագրով բաց մրցույթի շրջանակներում պայմանագիր կնքելու նպատակով «Ատլանտ Պրոֆիլ» ՍՊԸ-ի կողմից պետք է ներկայացվի պայմանագրի կատարման ապահովում պայմանագրի գնի տաս տոկոսի չափով: Պայմանագրի կատարման ապահովում ներկայացնելու դեպքում (գործողության ժամկետը 20.07.2021թ.): Պայմանագրի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով: Կանխիկ փողի ձևով ներկայացված պայմանագրի ապահովումը պետք է փոխանցվի Կենտրոնական գանձապետարանում Երևանի քաղաքապետարանի անվամբ բացված 9000152114291 գանձապետական հաշվին, ինչպես նաև որակավորման ապահովում բանկայի երաշխիքի ձևով՝ պայմանագրի գնի հարյուր տոկոսի չափով (գործողության ժամկետը 20.06.2020թ.):

Նույն ծանուցմամբ Մասնակցին խնդրել են, որ սույն ծանուցումը և պայմանագրի նախագիծը ստանալու օրվանից տասն աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուին ուղղված գրությամբ Երևանի քաղաքապետարան ներկայացնել «Ատլանտ Պրոֆիլ» ՍՊԸ-ի կողմից կնքված պայմանագրի երկուական օրինակները և վերը նշված ապահովումները,

ինչպես նաև www.armeps.am տիրույթում ընդունել պայմանագրի շնորհումը: Նշված ժամկետում չներկայացնելու դեպքում մասնակիցը կզրկվի պայմանագիր ստորագրելու իրավունքից:

Միաժամանակ Մասնակցին տեղեկացրել են, որ աշխատանքների կատարման հանձնման-ընդունման գործընթացը այսուհետ իրականացվում է էլեկտրոնային եղանակով /պայմանագրի 4-րդ բաժին/:

Հանձնաժողովի 07.04.2020թ.-ի նիստի թիվ 6 արձանագրության համաձայն՝ 20.03.2020 թվականին «Ատլանտ Պրոֆիլ» ՍՊԸ-ին ներկայացվել էր «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-20/18» գնման ընթացակարգի՝ Երևան քաղաքի «Պատանի հանդիսատեսի թատրոն» ՊՈԱԿ-ի լուսամուտների փոխարինման աշխատանքների պայմանագիր կնքելու առաջարկ: Մասնակիցը պարտավոր էր պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո տաս աշխատանքային օրվա ընթացքում /մինչև 03.04.2020 թվականը/ ստորագրել պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնել որակավորման ու պայմանագրի ապահովումները: Նշված փաստաթղթերը չներկայացնելու պարագայում մասնակիցը զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից: Տվյալ պարագայում «Ատլանտ Պրոֆիլ» ՍՊԸ-ի կողմից պայմանագիրը Պատվիրատուին չի ներկայացվել:

Հիմք ընդունելով «Գնումների մասին» օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասը՝ Հանձնաժողովը որոշել է Մասնակցին զրկել պայմանագիր կնքելու իրավունքից:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 16.04.2020թ.-ի թիվ 26/26-1/5677-2020 գրությամբ «Ատլանտ Պրոֆիլ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ … մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պայմանագրի ապահովում ներկայացնելու պահանջի հիման վրա այն ստանալու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում ընտրված մասնակիցը պարտավոր է ներկայացնել պայմանագրի ապահովում: Ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքվում է, եթե վերջինս ներկայացնում է պայմանագրի ապահովում:

Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 12-րդ ենթակետի համաձայն՝ ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկը և կնքվելիք պայմանագրի նախագիծը հանձնաժողովի քարտուղարը տրամադրում է էլեկտրոնային եղանակով: Ապրանքների գնման դեպքում պայմանագրի նախագծում ներառվում է ընտրված մասնակցի կողմից հայտով ներկայացված ապրանքի ամբողջական նկարագիրը:

Նույն կետի 13-րդ ենթակետի համաձայն՝ ընտրված մասնակցի կողմից հաստատված պայմանագրի նախագիծը պատվիրատուին ներկայացվում է գրավոր, և դա ներկայացնելու գրությունը հաշվառվում է պատվիրատուի փաստաթղթաշրջանառության համակարգում: Պատվիրատուի ղեկավարի կողմից պայմանագրի նախագիծը հաստատվում է այդ իրավասության առաջացմանը հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա

ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Վերոնշյալ իրավակարգավորումների համադրված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը եզրահանգում է, որ ընտրված մասնակիցը, հանձնաժողովի քարտուղարի կողմից էլեկտրոնային եղանակով ստանալով պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը, պարտավոր է 10 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուին ներկայացնել իր կողմից հաստատված պայմանագրի նախագիծն ու պայմանագրի կատարման ապահովումը:

Ընդ որում, եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին չի ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից:

Նման դեպքում առաջանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետի դրույթների կիրառման անխուսափելիությունը, քանի որ վերջինիս գործողությունները (անգործությունը) գնահատվում են, որպես պայմանագիր կնքելուց ընտրված մասնակցի կողմից հրաժարում:

Վերը շարադրվածից ելնելով՝ մասնակիցը պետք է ընդգրկվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ երկու տարի ժամկետով, քանի որ իր գործողություններով (անգործությամբ) պատվիրատուին չներկայացնելով պայմանագրի օրինակը և/կամ ապահովումը զրկվում է պայմանագիր կնքելու իրավունքից:

Սույն գործի փաստերի հիման վրա Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ Երևանի քաղաքապետարանի կողմից Երևան քաղաքի թվով 2 մշակութային կազմակերպություններում վերանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով 17.12.2019թ.-ին հայտարարված «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-20/18» ծածկագրով բաց մրցույթին մասնակցելու նպատակով հայտ ներկայացրած «Ատլանտ Պրոֆիլ» ՍՊԸ-ն Հանձնաժողովի 09.03.2020թ.-ի նիստի թիվ 5 արձանագրության համաձայն՝ «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-20/18» գնման ընթացակարգի՝ Երևան քաղաքի «Պատանի հանդիսատեսի թատրոն» ՊՈԱԿ-ի

լուսամուտների փոխարինման աշխատանքների պայմանագիր կնքելու առաջարկ է ներկայացվել «Ատլանտ Պրոֆիլ» ՍՊԸ-ին:

09.03.2020թ.-ին պայմանագիր կնքելու նպատակով գնումների պաշտոնական տեղեկագրում՝ www.gnumner.am կայքում Հանձնաժողովի կողմից հրապարակվել է պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարություն և սահմանվել է անգործության ժամկետ՝ հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ:

Պատվիրատուն 20.03.2020թ.-ին Մասնակցին ներկայացնելով «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-20/18» ծածկագրով պայմանագրի նախագիծը՝ հայտնել է, որ «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-20/18» ծածկագրով բաց մրցույթի շրջանակներում պայմանագիր կնքելու նպատակով «Ատլանտ Պրոֆիլ» ՍՊԸ-ի կողմից պետք է ներկայացվի պայմանագրի կատարման ապահովում պայմանագրի գնի տաս տոկոսի չափով: Պայմանագրի կատարման ապահովում ներկայացնելու դեպքում (գործողության ժամկետը 20.07.2021թ.): Պայմանագրի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով: Կանխիկ փողի ձևով ներկայացված պայմանագրի ապահովումը պետք է փոխանցվի Կենտրոնական գանձապետարանում Երևանի քաղաքապետարանի անվամբ բացված 9000152114291 գանձապետական հաշվին, ինչպես նաև որակավորման ապահովում բանկայի երաշխիքի ձևով՝ պայմանագրի գնի հարյուր տոկոսի չափով (գործողության ժամկետը 20.06.2020թ.):

Նույն ծանուցմամբ Մասնակցին խնդրել են, որ սույն ծանուցումը և պայմանագրի նախագիծը ստանալու օրվանից տասն աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուին ուղղված գրությամբ Երևանի քաղաքապետարան ներկայացնել «Ատլանտ Պրոֆիլ» ՍՊԸ-ի կողմից կնքված պայմանագրի երկուական օրինակները և վերը նշված ապահովումները, ինչպես նաև www.armeps.am տիրույթում ընդունել պայմանագրի շնորհումը: Նշված ժամկետում չներկայացնելու դեպքում մասնակիցը կզրկվի պայմանագիր ստորագրելու իրավունքից:

Միաժամանակ Մասնակցին տեղեկացրել են, որ աշխատանքների կատարման հանձնման-ընդունման գործընթացը այսուհետ իրականացվում է էլեկտրոնային եղանակով /պայմանագրի 4-րդ բաժին/:

Հանձնաժողովի 07.04.2020թ.-ի նիստի թիվ 6 արձանագրության համաձայն՝ 20.03.2020 թվականին «Ատլանտ Պրոֆիլ» ՍՊԸ-ին ներկայացվել էր «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-20/18» գնման ընթացակարգի՝ Երևան քաղաքի «Պատանի հանդիսատեսի թատրոն» ՊՈԱԿ-ի լուսամուտների փոխարինման աշխատանքների պայմանագիր կնքելու առաջարկ:

Մասնակիցը պարտավոր էր պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո տաս աշխատանքային օրվա ընթացքում /մինչև 03.04.2020 թվականը/ ստորագրել պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնել որակավորման ու պայմանագրի ապահովումները: Նշված փաստաթղթերը չներկայացնելու պարագայում մասնակիցը զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից: Տվյալ պարագայում «Ատլանտ Պրոֆիլ» ՍՊԸ-ի կողմից պայմանագիրը Պատվիրատուին չի ներկայացվել:

Հիմք ընդունելով «Գնումների մասին» օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասը՝ Հանձնաժողովը որոշել է Մասնակցին զրկել պայմանագիր կնքելու իրավունքից:

Նման պայմաններում, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ «Ատլանտ Պրոֆիլ» ՍՊԸ-ն, որպես ընտրված /հաղթող/ մասնակից, հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չներկայացնելով պայմանագիրը, հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

Ինչ վերաբերում է Մասնակցի կողմից դիրքորոշմամբ նշված այն հանգամանքին, որ Հայաստանի Հանրապետությունում ս.թ. մարտի 11-ից հայտարարված արտակարգ դրության և ս.թ. մարտի 24-ից հայտարարված խիստ տնտեսական սահմանափակումների արդյունքում «Ատլանտ Պրոֆիլ» ՍՊԸ-ի գործունեությունը դադարեցվել է, ուստի այդ հանգամանքով պայմանավորված վերջինս հրաժարվել է պայմանագիր կնքելուց, քանի որ հնարավորություն չէին ունենալու պայմանագրում նշված ժամկետներում կատարելու աշխատանքը, ապա ապա Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ Ընթացակարգի հրավերի պայմանագրի նախագծին կից թիվ 2 հավելվածով սահմանված օրացուցային գրաֆիկի համաձայն՝ Երևան քաղաքի «Պատանի հանդիսատեսի թատրոն» ՊՈԱԿ-ի լուսամուտների փոխարինման շինարարական աշխատանքների կատարման սկիզբ է սահմանվել ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրը, իսկ աշխատանքների կատարման նախընտրելի ժամկետ՝ 30.05.2020թ.-ը ներառյալ:

Բողոքներ քննող անձը փաստում է, որ օրենսդիրը նախատեսել է, որ պարտավորությունը խախտած ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող անձն ազատվում է դրա համար պատասխանատվությունից, եթե ապացուցում է, որ պարտավորության պատշաճ կատարումն անհնար է եղել անհաղթահարելի ուժի հետևանքով: Անհաղթահարելի ուժի կիրառումը պետք է պայմանավորված լինի այնպիսի հանգամանքների զուգորդմամբ, որոնք անհնարին են դարձնում կողմերի ստանձնած պարտավորությունների կատարումը, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում նաև փաստել, որ անհաղթահարելի ուժով պարտավորություններից ազատվելու հնարավորությունը ռեալ է, այսինքն՝ ծագում է արդեն իսկ ստանձնած պարտավորությունների չկատարման դեպքում, իսկ պարտավորությունները սույն դեպքում կարող էին առաջանալ պայմանագրի կնքման ուժով:

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման վրա՝ Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված կարգով, Մասնակցի կողմից մինչև 03.04.2020թ.-ին պայմանագիր կնքելը եղել է հնարավոր և այն չկնքելը չի կարող պայմանավորված լինել ՀՀ կառավարության 16.03.2020թ.-ի «Հայաստանի Հանրապետությունում արտակարգ դրություն հայտարարելու մասին» թիվ 298-Ն որոշմամբ Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում 2020 թվականի մարտի 16-ից ժամը 18:30-ից սկսած մինչև 2020 թվականի ապրիլի 14-ը ժամը 17:00-ն ներառյալ ժամկետով արտակարգ դրություն հայտարարելու հետ, քանի որ պայմանագիրը կնքելուց և այն ուժի մեջ մտնելուց հետո աշխատանքների կատարման նախընտրելի ժամկետ է սահմանված եղել 30.05.2020թ.-ը ներառյալ, իսկ պայմանագրի նախագծի 8.8 կետի համաձայն՝ աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, որպիսի պայմաններում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Ատլանտ Պրոֆիլ» ՍՊԸ-ն, որպես ընտրված /հաղթող/ մասնակից, հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չներկայացնելով պայմանագիրը, հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

Ուստի, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետի դրույթները, Մասնակցին պետք է ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 16.04.2020թ.-ի թիվ 26/26-1/5677-2020 գրությամբ «Ատլանտ Պրոֆիլ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2020/109 ծածկագրով ընթացակարգը բավարարել:

2. «Ատլանտ Պրոֆիլ» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ